Հաշվետվություն

2022 թվականի սեպտեմբերի 6-ից 8-ը Բելառուսի Հանրապետություն (Մինսկ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Հմայակ Հակոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի կադաստրային գնահատման և շուկայի վերլուծության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բելառուսի Հանրապետություն, Մինսկ, 2022 թվականի սեպտեմբերի 6-ից 8-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Բելառուսի Հանրապետության գնահատող կազմակերպությունների ասոցիացիա

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   - Մասնակցություն գնահատում իրականացնող կազմակերպությունների III-րդ համագումարին

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - Գնահատման գործունեության կարգավորումը Բելառուսի Հանրապետությունում,
   - Հայաստանի Հանրապետությունում գնահատման գործունեության կարգավորման օրենսդրական փոփոխությունների նպատակներն ու խնդիրները,
   - Գնահատման գործունեության կարգավորումը Ղազախստանի Հանրապետությունում,
   - Գնահատման գործունեության կարգավորումը Ղրղզստանի Հանրապետությունում,
   - Գնահատման գործունեության կարգավորումը Ռուսաստանի Դաշնությունում,
   - Գնահատման գործունեության զարգացման ուղղություններն ու միտումները,
   - Գնահատման գործունեության տեղեկատվական ենթակառուցվածքը,

- Գնահատում իրականացնող կազմակերպությունների III-րդ համագումարի ավարտական փաստաթղթի ընդունում:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Վերոնշյալ միջոցառմանը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն ներկայացրել է կադաստրային գնահատման և շուկայի վերլուծության վարչության պետ Հմայակ Հակոբյանը: Մինսկում տեղի ունեցան հանդիպումներ Մինսկի հողային կադաստրի և պետական գրանցման քաղաքային գործակալության ղեկավարության, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի Հանրապետությունների գնահատող կազմակերպությունների ասոցիացիաների ղեկավարության և Բելառուսի Հանրապետության մի քանի առաջատար գնահատող կազմակերպությունների ղեկավարների հետ: Քննարկվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող՝ գնահատման ոլորտի կարգավորման վերաբերյալ հարցեր: Ձեռք բերվեց համագործակցության պայմանավորվածություն:

Կոմիտեի կադաստրային գնահատման և շուկայի վերլուծության վարչության պետ Հմայակ Հակոբյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետությունում գնահատման գործունեության ոլորտում կատարված բարեփոխումները, օրենսդրական փոփոխությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համագումարը ընդունեց բանաձև: Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի Հանրապետությունների գնահատող կազմակերպությունների ասոցիացիաների ղեկավարությունների հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց փորձի փոխանակման և գնահատման ոլորտի զարգացման շուրջ ավելի սերտ համագործակցության վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.

Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկներ չեն եղել:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Հմայակ Հակոբյան 13.09.2022 թ.